

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**


ԲԱԼՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՇՈՏԻ

**19-ՐԴ ԴԱՐԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՄԿԶԲԻ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(ԱՆԳԼԻԱԼԵԶՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

**Ժ.01.01 «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2025



Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Զիվանյան Ալվարդ Հակոբի
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մակարյան Ալբերտ Արշավիրի
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Ռուկանյան Հերիքնազ Վանիկի
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական
սլետական մանկավարժական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունվարի 30-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ք. Երևան, Մուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեդմագիրն առաքված է 2025 թ. դեկտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու՝ *Ս. Մարգարյան* Ս. Ա. Մարգարյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է հայ մանկական գրականության ձևավորման և զարգացման գործընթացի ուսումնասիրությանը 19-րդ դարից մինչև 20-րդ դարասկիզբ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով թարգմանական մանկագրության դերին: Ուսումնասիրվում է հայկական պարբերականներում տպագրված մանկական ընթերցանությունը՝ դիտարկելով վերջինիս ազդեցությունը ժանրային համակարգի, թեմատիկ շրջանակների և գեղարվեստական մտածողության ձևավորման վրա: Ատենախոսությունը բացահայտում է, թե ինչպես են թարգմանական գործերը նպաստել հայ աշխարհիկ մանկագրության ձևավորմանը և ազգային մշակույթային ինքնության հարստացմանը՝ հայ գրականության պատմության համատեքստում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հայ թարգմանական մանկագրությունը դեռևս ամբողջական և համակարգված ուսումնասիրության առարկա չէ հայ գրականագիտության մեջ: Ներկայացվող աշխատանքը նպատակ ունի լրացնել այդ բացը՝ վերհանելով և վերլուծելով թարգմանական մանկագրության զարգացման օրինաչափությունները՝ դրանք դիտարկելով որպես հայ գրական մշակույթի անբաժանելի դրսևորում: Այս առումով հետազոտությունը կարևոր ներդրում է հայ գրականության պատմության, ժանրային համակարգի և թարգմանական գործընթացների փոխազդեցության խորքային ուսումնասիրության գործում:

Գաղտնիք չէ, որ հայ ժամանակակից մանկական գրականությունը հետ է մնում մեծահասակների գրականությունից: Պատճառներից է նախորդ ժամանակաշրջանի մանկագրության թերի ուսումնասիրությունը: Ժամանակակից մանկական գրականության թարգմանության համար բավարար տեսական հիմք չկա: Մինչդեռ փաստ է, որ մանկական գրականության թարգմանությունը զգալի ազդեցություն կարող է թողնել մանկական գրականության զարգացման վրա: Մեր ուսումնասիրությունը լրացնելու է այդ բացը՝ ամբողջացնելով հայ մանկագրության պատմությունը: Հարկ է նշել, որ հետազոտությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև միջազգային հանրության որոշակի շրջանակների համար, որոնք հետաքրքրված են մանկական գրականության թարգմանության պատմությամբ, պարբերական մամուլի բովանդակային խնդիրներով, համեմատական գրականությամբ, թարգմանության տեսական հարցերով: Ուսումնասիրվող ժամանակահատվածի եվրոպական, և մասնավորապես, անգլիական գրականության՝ քիչ թե շատ հայտնի գործերի թարգմանության պատմության մեջ բավարար կերպով չեն ներկայացված, իսկ որոշ դեպքերում, նաև իսպառ բացակայում են հայերեն թարգմանությունների մասին հիշատակումները: Մինչդեռ շատ նմուշներ տվյալ գործերի առաջին թարգմանություններից են, որոնց միջոցով կարելի է նաև ճշգրտումներ մտցնել բնագրերի ստեղծման ժամանակագրության մեջ:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել հայ մանկագրության զարգացման պատմությունը թարգմանական գրականության հետ փոխազդեցության

դիտանկյունից, համակարգված ներկայացնել և վերլուծել մանկական գրականության անգլերեն լեզվից կատարված հայերեն թարգմանությունները պատմական որոշակի ժամանակաշրջանում, քննել թարգմանության փոխակերպիչ դերը հայ մանկական գրականության և մշակութային ինքնության ձևավորման համատեքստում, ուսուժաստիքի տպագրական աղբյուրները, հրատարակության ձևերը և թարգմանության նպատակն ու ռազմավարությունը՝ դիտարկելով նաև հայերենի պատմական զարգացման փուլերի արտացոլումը թարգմանական գրականության տեքստում:

Այս նպատակին հասնելու համար հետազոտությունում առաջադրվում են հետևյալ **խնդիրները**

- Ուսուժաստիքի հայ մանկական գրականության առաջացումը և զարգացումը 19-րդ դարի սոցիալ-պատմական և մշակութային միջավայրում՝ վերլուծելով դպրոցների, մտավորական շարժումների և հրատարակչական գործունեության դերը, ուսուժաստիքի հայ մանկական գրականության առաջացումը և զարգացումը 19-րդ դարի սոցիալ-պատմական և մշակութային միջավայրում՝ վերլուծելով դպրոցների, մտավորական շարժումների և հրատարակչական գործունեության դերը:
- Հայ մանկական գրականության համատեքստում բացահայտել և վերլուծել պարբերականներում հրատարակված թարգմանական ստեղծագործությունները՝ դիտարկելով դրանք որպես հայ գրականության օրգանական մաս և ինքնուրույն արժեք ունեցող գործեր:
- Բնութագրել հայ մանկական գրականության բովանդակային, թեմատիկ, ժանրային և ռճական ուղղությունները՝ ընդգրկելով ինչպես բնագիր, այնպես էլ թարգմանված նյութերը:
- Ուսուժաստիքի թարգմանական գրականության դերը հայ մանկական գրականության զարգացման գործընթացում՝ տարբեր հայկական համայնքներում և բնակավայրերում:
- Վերհանել թարգմանիչների դերը որպես հայ գրականության ձևավորման մասնակիցներ և մանկական գրականության համահեղինակներ:
- Վերլուծել թարգմանված գրականության ընթերցողների շրջանակները և դրա ազդեցությունը հայ հասարակության կրթական ու արժեքային համակարգի ձևավորման վրա:
- Գնահատել թարգմանված մանկական գրականության դերը հայ գրականության զարգացման, հայախոս ընթերցողների դաստիարակության և եվրոպական (հատկապես անգլիական) գրականության հետ փոխազդեցության համատեքստում:
- Փաստագրել հայերեն թարգմանությունների կարևորությունը եվրոպական, մասնավորապես, անգլիական գրականության տվյալ գործերի միջազգայնացման, պահպանման, տարածման և մշակութային փոխազդեցությունների ձևավորման տեսանկյունից:

Հետազոտության **տեսական արժեքն** առաջին հերթին հայ մանկական գրականության պատմության համալրմանն ու զարգացմանը նպաստելն է: Արդյունքները կարող են ծառայել որպես տեսական հիմք հայ գրականության, մասնավորապես մանկական գրականության պատմության, ժանրային և գաղափարական ընթացքն ուսուսասիրողների համար:

Առենախոսության ուսուսասիրության առարկան մինչևորհրդային շրջանի հայ թարգմանական մանկագրությունն է՝ հայ մանկական գրականության ինքնատիպ և կարևոր բաժինը: Դիտարկվում է մասնավորապես 1850-ականներից մինչև 1920 թվականը մանկական պարբերականներում տեղ գտած անգլիալեզու երկերից թարգմանված գրականությունը, որը նպաստել է հայ մանկական գրականության զարգացմանը:

Գիտական նորույթը պայմանավորված է թեմայի բուն հարցադրմամբ՝ հայ մանկագրության պատմության ուսուսասիրությամբ՝ պարբերականների թարգմանական ընթերցանության միջոցով: Չնայած հայ մանկական գրականության վերաբերյալ գոյություն ունեցող ուսուսասիրություններին, այս հետազոտության միջոցով **առաջին անգամ** կատարում ենք մանկական և առավել հայտնի այլ պարբերականներում տպագրված հայալեզու թարգմանական մանկական գրականության բազմակողմանի վերլուծություն՝ հասանելիության դեպքում նշելով նաև թարգմանության աղբյուրները և բնագրերը: Պարբերականները սոսկ այն միջավայրն են, որտեղ հայտնվել են մեզ հետաքրքրող նյութերը: Այդ շրջանի թարգմանությունները ուսուսասիրված են մասամբ, սակայն անհրաժեշտ տեղեկությունների սղության պատճառով երբեմն նաև աղբյուրները կամ հեղինակները ոչ ստույգ են նշված: Այս ամենի բացահայտումը նոր ժամանակներում կօգնի լուծել ինչպես լեզվական խնդիրները, այնպես էլ նյութի ընտրության, բովանդակության և այլ հարակից հարցեր:

Գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ հետազոտությունը ոչ միայն հարստացնում է հայ գրականության և թարգմանության պատմությունը, այլև ընդգծում է թարգմանական մանկական գրականության դերը ազգային գրական ուղղությունների ու կրթական փորձառությունների ձևավորման գործում: Արդյունքները կարող են կիրառվել ժամանակակից գրահրատարակչական և կրթական նախաձեռնություններում՝ նպաստելով հայ մանկական գրականության զարգացմանը և լրացնելով ավանդական ու ժամանակակից միտուսների միջև եղած բացերը: Հետազոտությունը նաև մատչելի և հարուստ նյութ է տրամադրում հայ-եվրոպական (հատկապես անգլիալեզու) գրական կապերի և թարգմանությունների պատմությամբ զբաղվող մասնագետներին մշակութային, լեզվական և գրական փոխազդեցությունների դիտարկման համար: Արդյունքները կարող են գործնականում կիրառվել հայ մանկագրության պատմության, մամուլի պատմության, հայոց լեզվի զարգացման, թարգմանության տեսության և համեմատական գրականության վերաբերյալ դասընթացներում:

Հետազոտությունն իրականացվել է համեմատական, զուգադրական և վերլուծական **մեթոդների** կիրառմամբ: Պատմահամեմատական ու

գրականագիտական մոտեցումների շնորհիվ փորձ է արվել բացահայտել, թե ինչպես են աշխարհաբաղաբանական զարգացումները և գրական ուղղությունները պայմանավորել մանկական թարգմանությունների ընտրությունը, ինչպես նաև թարգմանիչների ու հրատարակիչների գործունեությունը: Թարգմանական մանկագրությունը դիտարկվել է ժամանակագրական և աշխարհագրական կտրվածքով՝ հիմնվելով պարբերականներում տպագրված նյութերի վերլուծության վրա: Սույն մեթոդաբանական մոտեցումները հնարավորություն են տալիս ամբողջականացնել հայ մանկական գրականության պատմությունը՝ ընդգծելով թարգմանական բաղադրիչի կենսական դերը նրա զարգացման գործում:

Ոլորտում կատարված սակավաթիվ ուսումնասիրությունները կարևոր հենք են մեր հետազոտությունն իրականացնելու համար, որը կարող է նպաստել հայ մանկական գրականության պատմության մի կարևոր ուղղության՝ թարգմանական մանկագրության գիտական ամբողջացմանը:

Ատենախոսության **փաստական նյութը** 1850-ականներից մինչև 1920 թվականը հայալեզու պարբերականներում տպագրված թարգմանական գրականությունն ու մանկական ընթերցանայուն է, որը նախատեսված է եղել մանկապատանեկան ընթերցողների կրթադաստիարակչական նպատակների համար:

Ուսումնասիրության շրջանակի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պարբերական մամուլը դիտարկվել է որպես հայ մանկական գրականության ձևավորման բնական միջավայր՝ այն հարթակը, որտեղ ծնունդ են առել և ձևավորվել առաջին թարգմանական մանկական նյութերը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության պատմության բաժնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները:

Ատենախոսության հիմնադրույթները և վերլուծություններն արտացոլվել են պարբերականներում հրատարակված հոդվածներում, ինչպես նաև մի շարք գեկույցներում, որոնք ներկայացվել են միջազգային և հանրապետական գիտաժողովերում և աշխատաժողովներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգրագործված գրականության ցանկից և հապավումների ցանկից: Ատենախոսության ծավալը 150 համակարգչային էջ է:

Ատենախոսության **ներածությունն** արտացոլում է հետազոտության ընդհանուր բնութագիրը, սահմանում ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, առարկան, արդիականությունն ու գիտական հիմնավորվածությունը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական արժեքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Թարգմանական մանկագրության պատմությունը 18-19-րդ դարերում

Ենթագլուխը ներկայացնում է թարգմանական մանկագրության ձևավորման և զարգացման տեսական հիմքերը 18-19-րդ դարերի եվրոպական և հայ մշակութային միջավայրերում: Մանկական գրականության առաջացումը դիտարկվում է «մանկություն» հասկացության ձևավորման հետ անքակտելի կապի մեջ. մանկության՝ որպես կյանքի առանձնահատուկ փուլի ընկալումը նպաստեց երեխաներին հասցեագրված հատուկ ընթերցանայության ստեղծմանը: Մասնավորապես մեծ է Է. Կոմբի (1797-1847) հետազոտությունների դերն այս ոլորտում, ով իր աշխատություններում ուսուժասիրում էր երեխաների հիմախնդիրները և ներկայացնում համապատասխան լուծումներ:

Տպագրության զարգացումը, կրթական համակարգի ընդլայնումը և մանկավարժական մտածողության առաջընթացը պայմանավորեցին մանկական գրականության սկզբնական՝ դաստիարակչական և խրատական բնույթը: Եվրոպայում մանկագրության զարգացման վրա վճռորոշ դեր ունեցան Ջոն Լոքի և Ժան-ժակ Ռուսոյի մանկավարժական գաղափարները, իսկ անգլիական մանկագրության ձևավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցավ Թ. Բորմանի, Մ. Քուլբերի և հատկապես Ջ. Նյուբերիի հրատարակչական ու գրական գործունեությունը: Վերջինիս աշխատանքները հիմք դրեցին ժամանակակից մանկական գրականությանը՝ նպաստելով ժանրի կայացմանը:

Թարգմանական մանկագրությունը դիտարկվում է որպես կրթական, բարոյական և մշակութային արժեքների փոխանցման կարևոր միջոց, հատկապես այն մշակույթներում, որտեղ աշխարհիկ մանկական գրականությունը դեռևս ձևավորման փուլում էր: Հայկական համայնքներում դպրոցների և պարբերական մամուլի զարգացումը ստեղծեց մանկապատանեկան ընթերցանայության հրատապ պահանջ: Հայ գրական ավանդույթում թարգմանությունը հանդես եկավ ոչ միայն որպես օտար գրականության փոխադրություն, այլ որպես ազգային գրականության ներքին զարգացման գործոն:

Այսպիսով, թարգմանական մանկագրությունը ներկայացվում է որպես հայ ազգային մանկագրության ձևավորման, աշխարհիկացման, մշակութային ինքնության հարստացման և զարգացման հիմնարար գործոն:

1.2. Հայ թարգմանական հեքիաթի ակունքները

Երկրորդ ենթագլխում քննվում է թարգմանական հեքիաթի զարգացումը Խ. Աբովյանի, Հ. Պարոնյանի, Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ գրողների թողած ժառանգության հիման վրա:

Հայ թարգմանական հեքիաթի ակունքների ուսումնասիրությունը առանցքային նշանակություն ունի հայ մանկական գրականության ձևավորման պատմությունը հասկանալու համար: Ինչպես ցույց է տալիս Ա. Զիվանյանի տեսական մոտեցումը, «հայ թարգմանական հեքիաթ» հասկացությունը ներառում է ինչպես օտար հեքիաթների հայերեն թարգմանությունները, այնպես էլ հայկական հեքիաթների օտարալեզու փոխանցումները: Հայ թարգմանական հեքիաթի սկիզբը պայմանականորեն կարելի է թվագրել 9–10-րդ դարերով՝ «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն թարգմանությամբ, որի հնագույն խմբագրությունը վերաբերում է 10-րդ դարի վերջին: Մանկապատանեկան պարբերականներն առանձնահատուկ դեր են ունեցել հեքիաթների ուղղակի և միջնորդավորված թարգմանությունների տարածման գործում՝ նպաստելով հայ հեքիաթագիտության հարստացմանը:

Հայ թարգմանական հեքիաթի պատմության մեջ միջնորդավորված թարգմանությունները գերակշռող բնույթ են կրել: Ռուսերենը, ֆրանսերենը և այլ լեզուներ հաճախ ծառայել են որպես միջնորդ լեզուներ, ինչի արդյունքում ստեղծվել են բազմաշերտ թարգմանական շղթաներ: Այդ գործընթացը երբեմն հանգեցրել է կառուցվածքային փոփոխությունների և հեղինակայնության կորստի, ինչպես, օրինակ, Հովհ. Թումանյանի մի շարք հեքիաթների դեպքում:

Թարգմանական հեքիաթը հայ մանկական գրականության մեջ եղել է կրթական և մշակութային արժեքների փոխանցման միջոց: Այն նպաստել է ընթերցանության մշակույթի ձևավորմանը և հայ մանկական գրականության կայացմանը՝ որպես ազգային գրականության ինքնուրույն և արժեքավոր շերտ:

1.3. Հայանգլիական գրական կապերի սկզբնավորումը

Սույն ենթագլխում դիտարկվում են հայկական համայնքներում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացները և դրանց ազդեցությունը հայ գրական կյանքի վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում Հնդկաստանի՝ բրիտանական գաղութացման ժամանակաշրջանի պատմական պայմաններին, որոնք, թեև հանգեցրին տեղական հայկական համայնքի աստիճանական թուլացմանը, միաժամանակ նպաստեցին հայ և անգլիական գրական շփումներին ու թարգմանական գործունեության առաջին ավանդույթների ձևավորմանը:

Հայ-անգլիական գրական կապերի սկզբնավորումը պայմանավորված է Կիլիկյան Հայաստանի ժամանակաշրջանից սկիզբ առնող աշխարհաքաղաքական, առևտրական և սոցիալ-տնտեսական շփումներով, որոնք հետագա դարերում աստիճանաբար վերածվեցին նաև մշակութային և գրական փոխառնությունների: Թեև այդ կապերի առաջին վկայությունները թվագրվում են դեռևս 14-րդ դարին, դրանց համակարգված և

փաստագրված դրսևորումը առավել ակնհայտ է դառնում 19-րդ դարից՝ հայ պարբերական մամուլի և տպագիր գրականության զարգացման համատեքստում: Այս գործընթացում առանձնահատուկ դեր է ունեցել հնդկահայ համայնքը, որը դարձավ հայ-անգլիական բազմակողմանի գրական հարաբերությունների կենտրոններից մեկը:

Հայ-անգլիական գրական կապերի ձևավորման առաջնային գործիչներից է Հովհաննես Ավդալյանցը, որի թարգմանական ժառանգությունը ներառում է ինչպես անգլերենից հայերեն, այնպես էլ հայերենից անգլերեն կատարված նշանակալի աշխատանքներ: Նրա գործունեությունը միտված էր ոչ միայն կրթական և բարոյական արժեքների փոխանցմանը հայ ընթերցողին, այլև հայկական պատմագրության և մշակութային ժառանգության միջազգային հանրայնացմանը: Ավդալյանցի թարգմանությունները կարևոր նշանակություն ունեցան ազգային ինքնագիտակցության ամրապնդման և հայրենասիրական գաղափարների արթնացման գործում:

Այսպիսով, հայ-անգլիական գրական կապերը ոչ միայն հարստացրին հայ թարգմանական գրականությունը, այլև էական դեր ունեցան հայ մանկագրության ձևավորման և զարգացման գործընթացում՝ նպաստելով նոր գեղարվեստական, գաղափարական և մանկավարժական մոտեցումների արմատավորմանը հայ գրական միջավայրում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԱՂ ՓՈԻԼԵՐԸ

2.1. Հայ նոր գրական միջավայրի ձևավորումը 17-19-րդ դարերում և գրատպության դերը մանկական գրականության առաջացման գործում

Սույն ենթագլուխը ներկայացնում է հնդկահայ համայնքի ձևավորման, մշակութային և կրթական գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև հայ գրատպության զարգացման փուլերը, որոնք հող նախապատրաստեցին թարգմանական մանկագրության առաջացման համար:

17-19-րդ դարերում հայ գրականության զարգացման ընթացքը սերտորեն առնչվում է նոր պատմական իրողություններին, գաղթի պայմաններում ձևավորված համայնքային կյանքին և կրթական ու մշակութային հաստատությունների կայացմանը: Այս շրջանը հայ գրականության պատմության մեջ նշանավորվում է աշխարհիկ գրական մտածողության աստիճանական հաստատմամբ, որի շրջանակում մանկական ընթերցանությունը սկսում է ընկալվել որպես գրականության ինքնուրույն և նպատակային ոլորտ: Հայ նոր գրական միջավայրը ձևավորվում է ոչ միայն լեզվական կամ ժանրային փոփոխությունների արդյունքում, այլև ընթերցողի նոր տիպի՝ հատկապես մանկական ընթերցողի ի հայտ գալու շնորհիվ: Հնդկահայ համայնքը այս գործընթացում առանձնահատուկ դեր ունի: Այն ձևավորվել է որպես կրթված, տնտեսականորեն անկախ և մշակութային առումով բաց միջավայր, որտեղ

գրականությունը դիտարկվում էր ազգային ինքնության պահպանման և փոխանցման հիմնական միջոցներից մեկը:

Հայ նոր գրական միջավայրում մանկական ընթերցանությամբ սկզբում ձևավորվում է կրթական և բարոյական նպատակադրությամբ: Գրական տեքստերը ծառայում էին լեզվական կրթությանը, բարոյական դաստիարակությանը և ազգային ինքնագիտակցության ձևավորմանը:

Այսպիսով, 17–19-րդ դարերի հայ նոր գրական միջավայրը, հատկապես հնդկահայ համայնքում, ստեղծեց այն պատմական, կրթական և մշակութային պայմանները, որոնց ներսում հնարավոր դարձավ հայ մանկական գրականության առաջացումը՝ որպես ազգային գրականության կարևոր բաղադրիչ:

2.2. Թարգմանական մանկագրության առաջին օրինակները և դրանց գաղափարական ուղղությունները հնդկահայ համայնքում

Երկրորդ ենթագլխում ուսումնասիրվում են հայալեզու թարգմանական նյութի առաջին օրինակները, դրանց ընտրության սկզբունքներն ու գաղափարական ուղղությունները:

Հնդկահայ համայնքում ստեղծված թարգմանական մանկագրությունը հայ մանկական գրականության ձևավորման ամենավաղ և նշանակալից փուլերից մեկն է: Այն առաջանում է որպես նոր գրական միջավայրի բաղադրիչ՝ սերտորեն կապված կրթական համակարգի, դպրոցական ծրագրերի և լուսավորական գաղափարախոսության տարածման հետ: Այս շրջանի թարգմանական մանկական գործերը հիմնականում ընտրում էին այնպիսի նյութ, որը համադրելի էր հայ հասարակության արժեքային համակարգի հետ: Մանկական ընթերցանության համար ընտրված գործերը նպատակ ունեին ձևավորելու վարքագծային նորմեր և նպաստելու կրթական նպատակների իրականացմանը՝ այդպիսով ծառայելով ազգային համայնքի ինքնակազմակերպման խնդիրներին: Այս հանգամանքը պայմանավորված էր այն համոզմամբ, որ մանկությունը մարդու կյանքի ամենաընդունակ փուլն է, և գրականությունը պետք է ուղղորդի երեխայի մտավոր ու բարոյական զարգացումը:

Միևնույն ժամանակ, այս գործերը նպաստեցին ժանրային և կառուցվածքային նոր լուծումների ներթափանցմանը հայ գրականություն: Արկածային, պատմողական և բարոյախոսական տարրերի համադրությունը ընդլայնեց մանկական ընթերցանության սահմանները:

Այսպիսով, հնդկահայ համայնքում ձևավորված թարգմանական մանկագրությունը հանդես եկավ ոչ միայն որպես օտար գրական փորձի փոխանցող, այլև որպես հայ մանկական գրականության գաղափարական, թեմատիկ և գեղագիտական ձևավորման կարևոր նախադրյալ: Ստեղծվեց այն հիմքը, որի վրա հետագայում հնարավոր դարձավ հայ մանկագրության կայացումը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

3.1. Արևմտահայ մանկագրության սկզբնավորումը և թարգմանական գործունեության դերը (1851–1855թթ.)

Ուսումնասիրության առարկա են դարձել արևմտահայ գրական միջավայրում ձևավորվող մանկական թարգմանական տեքստերը դիտարկված որպես նոր ժանրային երևույթի և մանկական ընթերցողի ձևավորման նախնական հիմք: 19-րդ դարի կեսերին ձևավորվող արևմտահայ մանկապատանեկան գրականությունը իր սկզբնական փուլում սերտորեն կապված էր թարգմանական գործունեության հետ, որը դարձավ հայ մանկագրության աշխարհիկացման և թեմատիկ ընդլայնման հիմնական խթաններից մեկը: Առաջին աշակերտական պարբերականները՝ «Բուրաստան սուրբ Սահակեանը», «Թութակ Հայկազեանը» և «Երկասերը», հանդես եկան որպես միջավայր, որտեղ հայ մանկական ընթերցանությունը սկսեց աստիճանաբար առանձնանալ մեծահասակների համար նախատեսված գրականությունից:

Այս պարբերականներում տպագրված նյութերի զգալի մասը թարգմանական էր, ինչը պայմանավորված էր հայերեն մանկական ստեղծագործությունների սակավությամբ: Սակայն թարգմանությունը այստեղ չի գործել մեխանիկական փոխադրման սկզբունքով, այն ենթարկվել է ընտրության, հարմարեցման և գաղափարական վերամշակման՝ համապատասխանեցվելով հայ մանկապատանեկան լսարանի կրթական, բարոյական և ազգային պահանջներին:

Արևմտահայ աշակերտական պարբերականները մեծ ուշադրություն են դարձրել նյութերի ժանրային բազմազանությանը: Ճանապարհորդական պատմությունները, կենսագրական ակնարկները, առակները, գրույցներն ու գվարձավեպերը նպաստել են պատանի ընթերցողի երևակայության, աշխարհաճանաչման և հետաքրքրասիրության զարգացմանը: Հատկանշական է, որ արևմտահայ մանկագրության այս վաղ փուլում թարգմանական գրականությունը նպաստել է նաև լեզվական և ոճական նոր փորձարկումներին՝ գրաբարի և աշխարհաբարի համատեղ կիրառմամբ, պարզեցված շարադրանքով և մատչելի արտահայտչամիջոցներով: Այս գործընթացը հող է նախապատրաստել արևմտահայ մանկական գրականության զարգացման համար:

Ընդհանուր առմամբ, արևմտահայ առաջին մանկապատանեկան պարբերականներում իրականացված թարգմանական գործունեությունը կարևոր դեր է կատարել հայ մանկագրության ձևավորման գործում՝ հաստատելով երեխաներին՝ որպես գրականության ինքնուրույն հասցեատեր և մանկական ընթերցանությունը՝ ազգային կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս:

3.2. Արևմտահայ թարգմանական մանկագրության զարգացումը 19-րդ դարի երկրորդ կեսին (1870–1893թթ.)

Սույն ենթագլուխը վերլուծում է թարգմանական մանկագրության գաղափարական և գրական ուղղությունները բացահայտելով գրական մտածողության նոր դրսևորումները և մանկագրության տարածման ուղիները:

19-րդ դարի երկրորդ կեսը արևմտահայ մանկական գրականության ձևավորման և կայացման կարևոր փուլերից մեկն է, երբ թարգմանական մանկագրությունը դառնում է հայ մանկագրական դաշտի կառուցվածքային և գաղափարական բաղադրիչ: Այս ժամանակաշրջանում մանկական ընթերցանությունը աստիճանաբար ձեռք է բերում ինքնուրույն կարգավիճակ, իսկ պարբերական մամուլը հանդես է գալիս որպես այն հիմնական հարթակը, որտեղ ձևավորվում են հայ մանկագրության կրթական, բարոյական և գեղարվեստական սկզբունքները:

Արևմտահայ մանկական պարբերականները՝ հատկապես «Երկրագունտ», «Բուրաստան մանկանց» և «Ծաղիկ մանկանց», նպաստում են հայ մանկագրության թեմատիկ, ժանրային և լեզվական ընդլայնմանը:

Պարբերականներում լայնորեն ներկայացված են առակներ, պատմվածքներ, կենսագրական ակնարկներ, ճանապարհորդական և գիտահանրամատչելի նյութեր, որոնք միաժամանակ ծառայում էին ինչպես գիտելիքի փոխանցմանը, այնպես էլ վարքագծային և արժեքային դաստիարակությանը: Թարգմանական նյութերի աղբյուրները բազմազան էին՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական և այլ եվրոպական պարբերականներ ու ժողովածուներ, սակայն հայ խմբագիրներն ու թարգմանիչները կարևորում էին հայերեն լեզվի ոճական մաքրությունը և մանկական ընկալման մատչելիությունը:

«Բուրաստան մանկանց» և «Ծաղիկ մանկանց» պարբերականներում նկատվում է թարգմանական գործունեության առավել համակարգված մոտեցում՝ ներառյալ աղբյուրների նշումը, զուգահեռ թարգմանությունների կիրառումը և ընթերցողների հետ ակտիվ հաղորդակցությունը:

Ընդհանուր առմամբ, 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ մանկական պարբերականներում իրականացված թարգմանական գործունեությունը վճռորոշ դեր է ունեցել հայ մանկագրության կայացման գործում:

3.3. Եվրոպական գրական հոսանքների անդրադարձը արևմտահայ մանկագրության մեջ

Արևմտահայ մանկագրության զարգացումը սերտորեն կապված էր եվրոպական գրական կենտրոններում ծավալված ստեղծագործական և թարգմանական նախաձեռնությունների հետ: Այս գործընթացում առանցքային դեր են ունեցել Միխիթարյան միաբանության ներկայացուցիչները, որոնց նպատակն էր ոչ միայն հայ գրականության պահպանումն ու զարգացումը, այլև համաշխարհային գրական ժառանգության փոխանցումը հայ ընթերցողին: Թարգմանական գործունեության շնորհիվ արևմտահայ գրական դաշտը հարստացավ բազմաբովանդակ

գեղարվեստական և գիտական նյութերով՝ միաժամանակ պահպանելով մշակութային ինքնության ամբողջականությունը:

Մխիթարյանների գործունեության կարևորությունը շեշտել է նաև Լորդ Բայրոնը, ով Սուրբ Ղազարում գտնվելու տարիներին (1816–1817) բարձր է գնահատել նրանց ձեռագրական և թարգմանական ժառանգությունը՝ ընդգծելով հայերենի հարստությունն ու մշակութային ներուժը: Անգլիական գրականության հետ կապը սկսվում է Ջոն Միլթոնի «Դրախտ Կորուսեալի» (1824) և Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի» (1818, 1836) գրաբար թարգմանություններով, որոնցից վերջինը կատարվել է ֆրանսերենով միջնորդավորված:

Մանկագրության ոլորտում նշանակալի է Մխիթարյանների հրատարակած 15-հատորյա «Մատենադարան մանկանց» մատենաշարը, որի գրքերը հիմնականում առնչվում են գերմանացի գրող Ք. Շմիդի ստեղծագործությանը: Այդ շարքում և «Բազմավեպի» էջերում լայնորեն ներկայացվել են նաև Հ. Սթոուի «Աղբար Թովմասի տնակը» և Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն», որոնք բազմիցս հրատարակվել են:

Մխիթարյանները հայ գրական միջավայր են ներմուծել նաև իտալական գրականության լավագույն նմուշները, հատկապես Էդմոնդո դե Ամիչիսի գործերը («Միրտը», «Ոստանիկ լեզուն»), որոնք լույս են տեսել «Բազմավեպում», հետագայում նաև՝ «Հասկերում», «Աղբիրում» և այլ պարբերականներում՝ ինչպես բնագրից, այնպես էլ տարբեր միջնորդավորված թարգմանություններով:

«Բազմավեպը» կարևոր հարթակ էր ոչ միայն գեղարվեստական թարգմանությունների, այլև լեզվական ու թարգմանական տեսության քննարկման համար: Հ. Ղևոնդ Ալիշանի հոդվածներում արծարծվել են թարգմանության համարժեքության, լեզվական քաղաքականության և անգլերենի՝ որպես «տիեզերական լեզուի» տարածման հարցերը: Եվրոպական կրթական համակարգին, գրողներին և գրական հոսանքներին նվիրված թարգմանական հոդվածները նպաստել են արևմտահայ մանկագրության գաղափարական, լեզվական և գեղագիտական հարստացմանը:

3.4. Հայ մանկագրության գաղափարական հենքը Մխիթարյան միաբանության թարգմանական ժառանգության մեջ

Մխիթարյան միաբանության թարգմանական գործունեությունը արևմտահայ մանկագրության մեջ հանդես է գալիս ոչ միայն որպես գրական փոխառությունների համակարգ, այլ որպես գաղափարական ու դաստիարակչական հենք ձևավորող կարևոր գործընթաց:

«Բազմավեպ» պարբերականը, իր երկարատև և փուլային զարգացման ընթացքում, աստիճանաբար վերածվեց հայ մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման գաղափարական հարթակի: Վաղ շրջանի կրոնաբարոյական և գիտաճանաչողական նյութերից անցում կատարելով դեպի աշխարհիկ գրականություն և գեղարվեստական թարգմանություններ՝ պարբերականը մշակեց ընթերցողի դաստիարակման հստակ մոտեցում, որտեղ առաջնային էին ընտրովի ընթերցանությունը, մտավոր վարժանքը և լեզվական ճաշակը: Հոմերոսի,

Վերգիլիոսի, Եգոպոսի գործերը, ինչպես նաև անգլիական դասականների թարգմանությունները ծառայել են բարոյական, պատմական և ազգային ինքնագիտակցության ձևավորման նպատակներին: Այս համատեքստում հատկապես նշանակալի են Բայրոնի գործերի բազմակողմանի ներկայացումները, որոնք միաժամանակ ներմուծում էին ազատության, անհատականության և պատմական հիշողության գաղափարներ: Բայրոնի հայերեն թարգմանություններում նկատվում է ոչ միայն լեզվական վարպետություն, այլ գաղափարական համադրություն հայկական իրականության հետ, ինչի վկայությունն է «Ծովահեն»-ի և «Չայլո Հարոլդի ուխտագնացության» թարգմանական ընկալումը:

Մխիթարյան թարգմանիչները հաճախ դիմել են իմաստային տեղայնացման, ինչպես Օ. Ուայլդի «Happy Prince»-ի «Արքայազն Փելիքս» տարբերակում, ինչը ցույց է տալիս մանկական ընթերցողի ընկալման նկատմամբ զգայուն մոտեցումը: Միննոյն ժամանակ «Բազմավեպը» հանդես է եկել որպես քննադատական հարթակ՝ արձագանքելով թարգմանությունների որակին և նպաստելով թարգմանական մտածողության ձևավորմանը:

Այսպիսով, Մխիթարյան միաբանության թարգմանական ժառանգությունը և եվրոպական գրական հոսանքների ստեղծագործական յուրացումը հայ մանկագրության մեջ ձևավորեց գաղափարական համակարգ, որը նպաստեց լեզվամշակութային միջավայրի կայացմանը և արևմտահայ մանկագրության հետագա զարգացմանը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐ

ԱՐԵՎԵԼԱՅԻԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

4.1. Թարգմանական միտումներն արևելահայ գրական միջավայրում 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարասկիզբ

19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարասկիզբ արևելահայ մանկական գրականության ձևավորումը և զարգացումը ընթանում է լեզվական, մշակութային և հասարակական խորքային վերափոխումների պայմաններում: Այս ժամանակահատվածում թարգմանական գրականությունը հանդես է գալիս որպես կրթական, գաղափարական և լեզվամշակութային գործիք՝ ուղղված նոր սերնդի դաստիարակությանը և աշխարհաբարի ամրապնդմանը: Արևելահայ մանկապատանեկան մամուլը, որպես ընդհանուր գրական գործընթացի բաղկացուցիչ, մեծ դեր է խաղում աշխարհիկ մանկական ընթերցանության ձևավորման գործում:

Թարգմանական մանկագրությունը զարգանում է գրաբարի և աշխարհաբարի միջև ընթացող լեզվական պայքարի համատեքստում, որը հետագայում տեղափոխվում է արևելահայերենի և արևմտահայերենի կանոնարկման դաշտ: Պարբերականների խմբագիրներն ու թարգմանիչները հանդես են գալիս տարբեր լեզվաքաղաքական դիրքորոշումներով՝ երբեմն նախապատվություն տալով գրաբարին, երբեմն՝ աշխարհաբարին՝ կախված ընթերցողական շրջանակից, կրթական նպատակներից և

տվյալ համայնքի լեզվական միջավայրից: Այս բազմազան մոտեցումները անմիջականորեն արտացոլվում են մանկական թարգմանական գրականության լեզվատճական առանձնահատկություններում:

Արևելահայ մամուլում լայն տարածում են գտնում համաշխարհային գրականության՝ հատկապես անգլիական, ֆրանսիական, գերմանական և ռուսական մանկագրության թարգմանությունները: Անգլիական մանկական գրականությունը հաճախ հայերեն է ներկայացվել միջնորդ լեզուների միջոցով, որոնց ընտրությունը պայմանավորված է եղել քաղաքական, սոցիալ-մշակութային և կրթական գործոններով:

Այսպիսով, արևելահայ մանկական գրականության ձևավորման գործընթացում թարգմանական գործունեությունը հանդես է գալիս որպես համակարգաստեղծ երևույթ՝ ապահովելով համաշխարհային գրական փորձի յուրացումը և դրա ներդրումը ազգային մանկագրության կայացման գործում:

4.2. Արևելահայ մանկագրության ձևավորման հիմնական ուղիները (1883–1920 թթ.)

Արևելահայ մանկական գրականության ձևավորման երկրորդ փուլը (1883–1920) նշանավորվեց թարգմանական գործունեության աստիճանական համակարգմամբ և մանկական ընթերցանության գաղափարական հստակեցմամբ:

Արևելահայ մանկապատանեկան մամուլը, մասնավորապես «Աղբիւր» (1883–1918) և «Հասկեր» (1905–1922) հանդեսները, դառնում են մանկագրության զարգացման հիմնական հարթակներ: Այս պարբերականներում համադրվում են բնագիր և թարգմանական նյութերը՝ ուղղված մանկապատանեկան ընթերցողի կրթադաստիարակչական պահանջներին:

Թարգմանական նյութերի զգալի մասը կատարվել է ռուսերենով միջնորդավորված, ինչը պայմանավորված էր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և մշակութային իրողություններով: Մինևույն ժամանակ հանդիպում են նաև ուղղակի թարգմանություններ անգլերենից, որոնք վկայում են արևելահայ լեզվամշակութային միջավայրի աստիճանական ընդլայնման մասին: Թարգմանիչները հաճախ հանդես են գալիս նաև որպես մշակողներ՝ փոխակերպելով բնագրերը, հարմարեցնելով դրանք հայ մանկական ընթերցողի ընկալմանը և երբեմն վերածելով ինքնուրույն ստեղծագործությունների: Այս գործընթացում առանձնահատուկ դեր են խաղում Հովհ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Աթ. Խնկոյանը, Ստ. Լիսիցյանը և այլք, որոնց գործունեության շնորհիվ թարգմանական մանկագրությունը ձեռք է բերում բարձր գեղարվեստական մակարդակ: Արդյունքում ձևավորվում է մի գրական միջավայր, որտեղ համաշխարհային գրական փորձը միաձուլվում է ազգային արժեքների հետ՝ նպաստելով արևելահայ մանկական գրականության գաղափարական, լեզվական և գեղարվեստական կայացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունը ներկայացնում է 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրության զարգացման համապարփակ պատկերը՝ շեշտադրելով դրա պատմատեսական, գրականագիտական և մշակութային նշանակությունը հայ մանկական գրականության ձևավորման և ազգային գրական ինքնագիտակցության զարգացման գործընթացում:

Հետազոտության հիմնական նպատակը հայ մանկական գրականության զարգացման պատմության ուսումնասիրությունն է՝ թարգմանական գրականության փոխազդեցության դիտանկյունից՝ վերհանելով այն ուղիները, որոնց միջոցով անգլերենից կատարված հայերեն թարգմանությունները նպաստել են ազգային մանկագրության ձևավորմանը, լեզվական և մշակութային ինքնության հաստատմանը:

Դեռևս 19-րդ դարի սկզբից հայ պարբերականներում տպագրված թարգմանական մանկական գրականությունը հիմք է դրել ինքնուրույն հայ մանկագրության առաջացմանը և զարգացմանը:

Պարբերական մամուլը ընտրվել է որպես ուսումնասիրության հենք, քանի որ այն ժամանակաշրջանի հայ մանկական գրականության բնական միջավայրն էր՝ ընթերցողների համար մատչելի նյութերի գլխավոր աղբյուրը: Թարգմանությունը, հատկապես անգլերենից, դիտարկվել է որպես այն հիմնական գրական մեխանիզմը, որի միջոցով հայ մանկագրությունը համալրվում էր նոր նյութերով և ձևավորվում էին նրա գաղափարական հիմքերը:

Այս դիտարկումների հիման վրա առանձնացվել են մի շարք եզրահանգումներ, որոնք ներկայացնում են 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ մանկական գրականության ձևավորման պատմական, լեզվամշակութային և գաղափարական բնույթը:

1. 19-րդ դարում հայկական համայնքներում դպրոցներ բացվելուն զուգահեռ՝ կրթական գործն իրականացնելու համար աշխարհիկ գրականությունն ստեղծելու անհրաժեշտություն է առաջանում, հատկապես մանկապատանեկան տարիքի ընթերցողների համար: Բնագրային աշխարհիկ գրականությունն ստեղծվելու զուգընթաց, թարգմանվում են համաաշխարհային գրականության արժեքավոր գործեր՝ հարստացնելով և զարգացնելով նոր ձևավորվող հայ մանկական գրականությունը:

2. Քանի որ տվյալ ժամանակաշրջանում գրաբարից աշխարհաբար անցման ավարտական փուլն էր, արևելահայերենի և արևմտահայերենի զարգացումն անմիջականորեն արտացոլվել է մանկական գրականության մեջ և հատկապես, թարգմանական ստեղծագործություններում: Հեղինակներն ու խմբագիրները, նպատակ ունենալով գրականությունը հարմարեցնել մանկապատանեկան ընթերցողի լեզվատառնչությանը և ժանրային նախասիրություններին, լեզվական մի շարք խնդիրներ են լուծել:

3. Հայ մանկագրության գաղափարական ու թեմատիկ ձևավորմանը նպաստեց նաև թարգմանված գրականության բովանդակային ընտրությունը: Հայ գրականությունը այս փուլում ձևավորում էր իր մանկագրական մոտեցումները՝ ընտրելով կրթական,

դաստիարակչական, գիտական, գեղարվեստական և նույնիսկ սոցիալական բովանդակությամբ գործեր: Թարգմանությունները ընդգրկում էին տարբեր ժանրեր՝ արկածային, պատմողական, ուսուցողական, որոնք հետագայում մուտք գործեցին նաև հեղինակային մանկական գրականության դաշտ՝ ձևավորելով ժանրային ու կառուցվածքային առանձնահատկություններ:

4. Հայ մանկական գրականության զարգացման գործում թարգմանությունների դերը միայն լեզվական փոխակերպումներին չէր վերաբերում: Ինչպես բնագրային, այնպես էլ միջնորդավորված թարգմանությունները դարձան հայ գրականության նյութ: Թարգմանիչների ընտրած լեզվական լուծումները, ոճական հարմարեցումները և երբեմն նաև բովանդակային փոփոխությունները վկայում են այն մասին, որ թարգմանությունը դիտարկվում էր ոչ թե որպես ուղիղ փոխադրություն, այլ որպես գեղարվեստական վերամշակում, որի նպատակն էր ստեղծել հայ գրականության համար ընկալելի և արժեքավոր հայերեն տեքստեր:

5. Հայ գրողների և մշակութային գործիչների միջև եղած սերտ համագործակցությունը տարբեր կենտրոններում բերեց ընդհանուր գրական ուղղությունների ձևավորմանը, որտեղ մանկագրությունն աստիճանաբար վերածվեց ազգային ինքնագիտակցությունը ձևավորող գրական ոլորտի: Թեև տարբեր համայնքների վրա ազդում էին տեղական քաղաքական և կրոնական միջավայրերը, ընդհանուր նպատակն էր ազգային գրական արժեքների ձևավորումը՝ հատկապես նոր սերնդի համար:

6. Թարգմանական նյութերը, տարածվելով մանկական գրականության ներսում, հարստացրին հայ հեքիաթագրությունը՝ նպաստելով նոր թեմաների, կերպարների ու պատմողական կառուցվածքների զարգացմանը: Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի, Աթ. Խնկոյանի, Ավ. Իսահակյանի, Ղ. Աղայանի և Ստ. Լիսիցյանի թարգմանական աշխատանքները՝ հիմնականում միջնորդ լեզուներով, ներկայացնում են մի փուլ, երբ թարգմանությունները վերածվում էին ինքնուրույն հայ գրական գործերի:

7. Թարգմանված գրականությունը կարևոր խթան է եղել հայ մանկագրության պատմության մեջ: Թարգմանությունները կարևոր տեղ են զբաղեցնում հայկական թարգմանական մանկագրության էջերում և մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես միջնորդավորված թարգմանական բազմաշերտ շրթանների կառուցման առումով: Արդյունքում, հայ գրականությունն իր ներսում ներառել է համաշխարհային գրականության կարևոր շերտեր՝ թարգմանական մշակման շնորհիվ, ձևավորելով մի եզակի պատուհան դեպի համամարդկային գրականություն՝ ազգային լեզվով և հայկական աշխարհընկալմամբ:

Այսպիսով, հայ մանկական գրականությունը ձևավորվել է ոչ միայն ինքնուրույն ստեղծագործական գործունեության արդյունքում, այլև թարգմանական գրականության ստեղծագործաբար յուրացվելու և հայ գրական միջավայրում լիարժեք կերպով ներգրավվելու շնորհիվ: Թարգմանված գրականությունը, դուրս գալով սոսկ միջնորդական գործառնությունից, նպաստել է գրական լեզվի մշակմանը, թեմատիկ բազմազանության ընդլայնմանը և ժանրային ձևերի հաստատմանը դառնալով հայ մանկագրության անբաժանելի մասը:

ԱՄԵՆԱԴՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Baloyan V., “Translations of English Children’s Literature in the Armenian Periodicals in India.” Translation Studies: Theory and Practice, vol. 2, no. 2 (4), 2022, pp. 49–56, <https://doi.org/10.46991/TSTP/2022.2.2.048> (Scopus)
2. Baloyan V., “Armenian Periodical “Bazmavep”. A Bridge of Literary and Cultural Exchange Between Armenians and Europeans.” Scientific Works of Shirak Center for Armenological Studies of NAS RA, vol. 2 (26) (2023) pp. 180–189. <https://doi.org/10.52971/18294316-2023.26.2-180>
3. Բալոյան Վ., «Լեզվաքաղաքականությունը եւ թարգմանական գրականությունը 19-րդ դարի հայալեզու պարբերականներում», Հայագիտական հանդես Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարանի, հ. 4 (63) 2023, էջ. 123-135: <https://doi.org/10.24234/journalforarmenianstudies.v4i63.76>
4. Baloyan V., “Intermediary Translations of Children’s Literature in Armenian Periodicals of the 19th Century”. Translation Studies: Theory and Practice, 2024, pp. 192–200 (Scopus) <https://doi.org/10.46991/TSTP/2024.SI.2.192> *
5. Baloyan V., European Literature Translations Published in the 19th Century Western Armenian Children's Periodicals, Vestnik of Russian-Armenian (Slavonic) University, 2 (2024) <https://doi.org/10.24412/1829-0450-2024-2-106-118>
6. Բալոյան Վ., «Թարգմանական մանկագրությունը հայկական առաջին աշակերտական պարբերականներում», Գիտական Արցախ, հ. 3 (22) 2024, էջ 154-162 <https://doi.org/10.52063/25792652-2024.3.22-154>
7. Բալոյան Վ., «Անգլալեզու մանկագրությունը հնդկահայ պարբերականներում», Հասկեր մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, Հովհ. Թումանյանի թանգարան, Երևան, 2023, էջ 19-40

ВАРДУИ БАЛОЯН

Армянская переводная детская литература XIX – начала XX веков (на основе переводов англоязычных материалов)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности «Армянская средневековая и новая литература».

Защита диссертации состоится **30 января 2026 г., в 12:30**, в Диссертационном совете 003 по литературоведению Комитета по высшему образованию и науке, действующем при Институте литературы имени М. Абегяна НАН РА, по адресу: г. Ереван, ул. Григора Лусаворича 15. С диссертацией можно ознакомиться в библиотеке Института литературы имени М. Абегяна.

РЕЗЮМЕ

Объектом данного исследования является переводная на армянский язык детская литература досоветского периода – уникальный и значимый раздел армянской литературной истории.

Предметом исследования является литература, переводная с английского на армянский язык и опубликованная в детских периодических изданиях с 1850-х по 1920-е годы, сыгравшая ключевую роль в развитии армянской детской литературы. Исследование сосредоточено на вкладе переведённых произведений в формирование армянской литературной культуры. Переводная детская литература занимает уникальное место в истории литературы. Несмотря на глубокие корни армянской детской литературы, примерами которых являются произведения М. Гоша, В. Айгекци и Н. Шнорали, изучение переводной литературы на армянском языке остаётся ограниченным. Перевод выступает как культурный и литературный мост, позволяя принимающей литературе усваивать иностранные литературные течения и эстетические принципы. Возникновение и развитие армянской детской литературы в первой половине XIX века было тесно связано с образовательной, культурной и социально-экономической средой армянской диаспоры, характеризовавшейся созданием школ, типографий и периодических изданий. Это породило спрос на светскую литературу для детей, включавшую как оригинальные, так и переведённые тексты. Периодические издания, выступавшие основным носителем информации, сыграли важную роль в распространении литературы, научных знаний и нравственного воспитания, формируя среду, в которой переводная литература стала неотъемлемой частью армянской светской литературы.

Актуальность темы обусловлена тем, что армянская переводная детская литература ещё не получила систематического изучения в рамках армянского литературоведения. Данное исследование восполняет этот пробел, изучая закономерности развития, практику перевода и идеологическое содержание переведённых детских произведений, подчёркивая их роль во взаимодействии армянской и европейской литературных культур. Современная армянская детская литература часто отстаёт от взрослой литературы, частично из-за недостаточного исторического и теоретического осмысления предыдущих периодов. Понимание роли переводной литературы важно для решения современных лингвистических, литературных и образовательных задач.

Цель диссертации – изучение истории развития армянской детской литературы через призму переводной литературы, в частности англо-армянских переводов, а также анализ их преобразующей роли в формировании литературной и культурной идентичности. Исследование рассматривает печатные источники, формы публикации, стратегии перевода и историческую осмысленность, заложенные в переведённых текстах.

Для достижения этой цели поставлены следующие **задачи**:

- Изучить возникновение и развитие армянской детской литературы в социально-историческом и культурном контексте XIX века с учётом роли школ, интеллектуальных движений и издательской деятельности.
- Выявить и проанализировать переведённые произведения, опубликованные в периодических изданиях, рассматривая их как органическую часть армянской литературы с самостоятельной литературной ценностью.
- Охарактеризовать содержание, тематику, жанр и стилистические направления армянской детской литературы, включая оригинальные и переведённые произведения.
- Изучить роль переводной литературы в различных армянских общинах и её влияние на формирование ценностей и принципов воспитания.
- Раскрыть роль переводчиков как участников создания армянской литературы, признавая их соавторами и культурными посредниками.
- Проанализировать читательскую аудиторию и восприятие, показать, как переведённые произведения влияли на формирование мировоззрения, грамотности и эстетического вкуса армянских читателей.
- Оценить влияние переведённой литературы на развитие армянской литературы и её взаимодействие с европейской, особенно английской, литературой.
- Документировать значение армянских переводов для международного литературного обмена, сохранения культуры и распространения европейских произведений.

Научная новизна исследования заключается в проведении всестороннего анализа переведённой детской литературы в армянских периодических изданиях, выявлении первоисточников и практики перевода, а также оценке их роли в литературном, культурном и образовательном развитии. Исследование восполняет пробелы существующих научных работ. В исследовании использовались сравнительные, сопоставительные и аналитические методы, а также исторический и литературоведческий подходы для изучения влияния геополитических событий, литературных тенденций и практики периодической печати на переводную детскую литературу.

Диссертация состоит из введения, четырёх глав с соответствующими подразделами, заключения, библиографии, списка литературы и перечня сокращений.

В целом, диссертация представляет собой всестороннее исследование армянской переводной детской литературы, подчёркивая её историческое, литературное и культурное значение, а также предлагая **теоретическую и практическую основу** для дальнейших исследований в области армянской литературы. Особенно там, где источники, авторы или история публикаций ранее были неполными или неточными. Работа способствует пониманию того, как переводная литература способствовала модернизации армянской детской литературы, формированию её жанровой системы и эстетических принципов.

Теоретическая новизна диссертации заключается в том, что она предлагает систематическую основу для анализа армянской детской литературы как взаимосвязанного литературного, культурного и лингвистического явления, интегрируя переводоведение, историю литературы и культурологию.

Практическая ценность исследования заключается в обогащении истории армянской литературы и переводоведения, предоставлении рекомендаций для современного издательского дела, образовательной практики и развития литературы. Результаты исследования представляют интерес для историков, педагогов и литературоведов как в Армении, так и за рубежом, позволяя глубже понять армянско-европейские литературные связи, принципы перевода и распространение культурных идей. Полученные данные могут быть применены в современных подходах к преподаванию армянской литературы, переводоведения и сравнительного литературоведения.

VARDUHI BALOYAN

Armenian Translated Children's Literature in the 19th and Early 20th Centuries (Based on Translations of English-Language Materials)

The summary of the dissertation for claiming the degree of Candidate of Philological Sciences in the specialization "Armenian medieval and new literature". The defense of the dissertation will take place on January 30, 2026, at 12:30, at the Specialized Council 003 in Literary Studies of the Higher Education and Science Committee, operating at the Institute of Literature after M. Abeghyan of NAS of the Republic of Armenia, located at 15 St. Grigor Lusavorich Street, Yerevan.

The dissertation is available for consultation at the Library of the Institute of Literature after M. Abeghyan.

SUMMARY

The **object** of this research is Armenian translated children's literature of the pre-Soviet period, a unique and significant section of Armenian literary history. The subject of the study is the literature translated from English into Armenian, published in children's periodicals from the 1850s to 1920, which played a pivotal role in the development of Armenian children's literature. The research focuses on the contribution of translated works to the formation of Armenian literary culture and language development.

Translated children's literature occupies a unique position in literary history. While Armenian-language literature for children has deep roots, with examples found in the works of M. Gosh, V. Aygektsi, and N. Shnorhali, the study of translated literature in Armenian has been limited. Translation functions as a cultural and literary bridge, allowing the receiving literature to absorb foreign literary currents and aesthetic principles. The emergence and growth of Armenian children's literature in the first half of the 19th century were closely tied to the educational, cultural, and socio-economic environment of the Armenian diaspora, which saw the establishment of numerous schools, printing houses, and periodicals. This created a demand for secular reading material for children, which required both original and translated texts. Periodicals, as the primary medium of publication, were instrumental in disseminating literature, scientific knowledge, and moral education, and they provided the framework in which translated literature became an integral part of Armenian secular literature. The relevance of the topic stems from the fact that Armenian translated children's literature has not yet been systematically studied within the broader context of Armenian literary studies. This research addresses this gap by examining the patterns of development, translation practices, and ideological content of translated children's literature, highlighting its role in the interaction between Armenian and European literary cultures. Modern Armenian children's literature has often lagged behind adult literature, partly due to insufficient historical and theoretical study of earlier periods. Understanding the role of translated literature is essential for addressing contemporary linguistic, literary, and educational challenges.

The **aim** of the dissertation is to study the history of the development of Armenian children's literature through the lens of translated literature, particularly English-Armenian translations, analyzing their transformative role in literary and cultural identity formation. The research investigates the printing sources, publication forms, translation strategies, and historical reflection embedded in the translated texts.

To achieve this **aim**, the following **objectives** are set:

- To study the emergence and development of Armenian children's literature within the socio-historical and cultural context of the 19th century, considering the role of schools, intellectual movements, and publishing activity.
- To identify and analyze translated works published in periodicals, treating them as an organic part of Armenian literature with independent literary value.
- To characterize the content, thematic, genre, and stylistic directions of Armenian children's literature, including both original and translated works.
- To examine the role of translated literature in different Armenian communities, assessing its impact on the formation of values and educational principles.
- To reveal the role of translators as participants in the creation of Armenian literature, acknowledging them as co-authors and cultural mediators.
- To analyze readership and reception, showing how translated works influenced the formation of Armenian readers' worldview, literacy, and aesthetic taste.
- To assess the impact of translated literature on Armenian literary development and its interaction with European, especially English, literature.
- To document the significance of Armenian translations for international literary exchange, cultural preservation, and the dissemination of European works.

The **scientific novelty** of the research lies in conducting a comprehensive analysis of translated children's literature in Armenian periodicals, identifying original sources and translation practices, and evaluating their role in literary, cultural, and educational development. This study addresses gaps in existing scholarship, particularly in cases where sources, authors, or publication history were previously incomplete or inaccurate. The research contributes to understanding how translated literature facilitated the modernization of Armenian children's literature and the interpenetration of global literary trends.

The **theoretical novelty** is that the dissertation provides a systematic framework for analyzing Armenian children's literature as an interconnected literary, cultural, and linguistic phenomenon, integrating translation studies, literary history, and cultural theory.

The **practical value** of the study lies in enriching the history of Armenian literature and translation, offering guidance for modern publishing, educational practices, and literary development. The results are valuable for historians, educators, and literary scholars, both in Armenia and internationally, for understanding Armenian-European literary connections, translation principles, and the circulation of cultural ideas. The findings can inform contemporary approaches to the teaching of Armenian literature, translation studies, and comparative literature courses.

The research uses **comparative, juxtaposition, and analytical methods**, alongside historical and literary approaches, to study the influence of geopolitical developments, literary trends, and periodical practices on translated children's literature.

The dissertation consists of an introduction, four chapters with respective subchapters, a conclusion, a bibliography, reference materials, and a list of abbreviations.

In sum, the dissertation provides a comprehensive study of Armenian translated children's literature, highlighting its historical, literary, and cultural significance, and offering a theoretical and practical framework for further research in Armenian literary studies.

